

ԲԱՃԱՆՈՐՊ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան 10 մր.
 Վեցամսյ 5 »
 Արասահմանի հա-
 մար տարեկան 12 »
 Վեցամսյ 6 »
 ԱՆՆԻԿ ՎՃԻՐԵԼԻ

—(—
 Գրութիւնք և ս չեն տրուի
 —(—
 Կանոնական տողը 20 սան-
 բիւն է. երեքին տակ ի սան-
 ցաւներու համար 20 ՕԼՈ
 գեղջ կըրայ:

ՇՆԱՐԱԹ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ԶՈՐԵՔՉՈՒԹԻ ԵՒ ՇՆԱՐԱԹ ՕՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՊԱՏԱՆԱՆԱՏՈՒ Յ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

Նամակ և գրամ դրեկ
 Խմբագրութեան հասցի ին

Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.

Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՅԵՂ. ԳԱՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Հայ Յեղ. Դաշնակցութեան պատ-
 ճառարներու ժողովը, յայտարարու-
 րիւն մը դրկած է Պերլիւնի դաշնակցի-
 րը ստորագրող տնտեսականներուն, զոր
 ի ստորեւ կը հրատարակենք ամբողջու-
 րեամբ:

Կրեալէն արդէն ազատուած՝ իր
 ինքնուրոյն կեանքը կը վերսկսի:
 Այժմ ժողովրդի զուակներուն
 զիջացական եւանդին շնորհիւ,
 անգամ մըն ալ յաղթանակեց ար-
 դարութեան սկզբունքը որուն
 այնքան երկար ու զար ընդդի-
 մացար:

Հակառակ ձեր բոլոր ջանքի-
 րուն զորս ի դարձ զրիք ձեր
 թնդանութեանը կրեալցիներուն
 տրտունջներն ու հեծեմանքները
 խեղդելու, վերջապէս տեղի
 տուիք, մէկգի նեւեւ լով հարստա-
 հարութեանց ու բարբարոսու-
 թեանց բէժմը:

Կարելի է արդեօք յոսալ թէ
 ձգձգումի քաղաքականութեան
 այս վերջին վիճումը ձեզի խոր-
 հրգածել պիտի տայ վերջապէս,
 և հրաժարի թուրքիոյ ընկճուած
 ժողովուրդներուն համար այն-
 քան ահաբեկ և այնքան աղ-
 տաբեր այս բէժմը երկարելէ,
 ահաբեկ մահաւանդ հայուն հա-
 մար որուն գաղտը, իրացնէ, որ-
 ուն քաղաքականութեան առա-
 ջին տեղը պէտք է գրաւէ, քա-
 նի որ 1896ին անոր կարգադրու-
 թիւնը յետաձգող կրեալցի
 խեղդելու լուծուած է անգաւան-
 լի կերպով:

Հոս ոչ տեղն է, ոչ ժամանակը
 ձեզի նկարագրելու հայկական
 գաղտնարիւնայն պատմութիւ-
 նը, իր կեղծագին մանրամաս-
 նութիւններով: Սակայն պարտք
 կը համարենք ձեզ յիշեցնել թէ՛
 հայկական տաղանդը թուրքիոյ
 մէջ արբող անիշխանութեան ան-
 խուսափելի հետեւանքն ըլլալով,
 իր զարգացման ու իր զանազան
 արտայայտութեանց մէջ, միշտ
 ձեր գործելու եզանակէն ազ-
 դուած է: Այս բոլորը ծանր պա-
 տասխանաւորութեան մը կ'են-

թարկէ զձեզ և բարոյական պար-
 տականութիւն մը կը դնէ ձեր
 վրայ պէտք է հայերը:

Մինչդեռ Յոյները իրենց ան-
 կախութեան համար կ'ուր կը
 մղէին և թուրք կառավարութիւ-
 նը իր պատթը ճէրիֆոյն մէջ
 կը յայտարարէր թէ, ԱՆՀԱՏ ՄԸ
 ՈՐՔԱՆ ՍԼ Ի ՂՂՂՍԼԻ ԸԼԼԱՅ,
 ՉԻ ԿՐԵՆՐ ԻՆՔՉԻՆՔԸ ՉՊԵԼ ՈՒԺԻ
 ԴԻՄԵԼԷ, ԵՐԷ ԻՐ ԿԵՆՏՐՈՆ
 ՏԻՒԸ ՎՏԱՆԳԻ ԵՆԹՆՐՈՒՄԸ ԸԼ-
 ԼԱՆ. Հայերը տակաւին իրենց
 անկեղծութեան ապացոյցը կու-
 տային իրենց քրտինքով հայ-
 րենի հողը սողոգելով, թուրք
 պաշտօնեաներու և քիւրտ աւա-
 զակներու օգտին:

Բայց ամէն համբերութիւն
 վերջ մը ունի:

Բուռն ու անդադրում կեղծ-
 քումները, մարդկային արժանա-
 պատուութեան անհրաժեշտ պէտ-
 քերուն մշտական ու սխտեմա-
 թիքական անապահովութիւնը,
 սպառնցին Հայուն համբերու-
 թիւնն ու խոհեմութիւնը և զանի
 յեղափոխական կրակին մէջ նե-
 տեցին: Մահուն թուրքիոյ քրիս-
 տոնեաներուն ազատումին ծագած
 Բուռն-Քրքական պատերազմը,
 Սան-Սթեֆանօի դաշնագրին 16րդ
 և Պերլիւնի դաշնագրին 61րդ
 յօդուածներով, արժարձեց այս
 կրակը, փութացուց այս շարժու-
 մը և մեզ, Հայերուս, կարծել
 տուաւ թէ ազատութեան ժամը
 մեզ համար ալ պիտի հնչէր:

Բայց վերջին տարիներու ցա-
 ւալի վորձառութիւնը յայտնա-
 պէս ապացոյցուց թէ այս յօդ-
 ուածները մեռել տաւ կը մնա-
 յին և կայսրութիւնը հեղհեղ
 էր վատթարանար...

Այս պարագաներուն մէջ Հայե-
 րուս կը մնար միայն ընթանալ
 այն ճակատագրապէս յեղափոխ-
 կան ճամբով, որով գայած էին
 փատիշահներու լուծարողութեան
 թափած ազգութիւնները:

«Արիւն թափեցէք ազատու-
 լու համար... ահա ինչ որ մեզի
 կը սրբեցնէ յոյն, սերպ ու պուլ-
 կարական ինդիւստրիան լուծու-
 մը: Հայ ազգը իր երկիրը ողո-
 զեց իր արիւնով, բայց դուք

ձեր ձեռքերը լուացիք Պիղա: ոսի
 պէս: Ինչիկա ամէն ինչ զոհեց իր
 ազատութեան համար և սոկաց
 այն տառապանքներուն որոնց
 առջեւ կը տեսնանան մարդկային
 տարեգրութեանց ամենէն ահ-
 ուելի էջերը: Եւ այսօր կարմիր
 ժողովանէն ջարդուած, Հայաս-
 տանը սարսափելի թշուառութեան
 մտանում է, որուն մասին դա-
 զափար մը տալ իսկ անկարելի է:

Աւելի քան 100,000 այրիներ,
 50,000 սրբեր և 300,000 նահա-
 տախուած մարտիրոսներու ուր-
 ուականները կը կանգնին ձեր
 առջեւ իրենց հայրենիքի գաղտը
 պաշտպանելու համար:

Ժամանակը չէ՞ փութացնելու
 ինչ որ օր մը ճակատագրականա-
 պէս պիտի կատարուի. որովհե-
 տեւ անկարելի է որ Հայերը այն-
 քան զոհաբերութիւններէ ետք,
 վար դենն ղէնքերը, ուրիշ ազ-
 գերու պէս իրենց ապրելու ի-
 բրաւունքը ձեռք բերելէ առաջ
 միթէ չէ՞ք տեսնար որ պատմա-
 կան ճակատագրականութիւնը, իր
 մահուան կնիքով կ'ըքած է Օս-
 մանեան կայսրութիւնը:

Ահա որ էին մեր ընդունած
 հարուածները, բայց ապակին
 փշրող հարուածը պոչպատը կը
 կուէ:

Հայ ազգը որ տարիներուն ըն-
 թացքին մէջ, կրցած է տոկալ
 այնքան մեծ ալէտներու, որ, վեր-
 ջին գէոքերու առեւն, այնքան
 փայլուն ապացոյցներ տուած է
 զիջացականութեան ու զոհաբերու-
 թեան, հայ ազգը դեռ իր մէջ
 պահեւորուին կենսականութեան
 անուպառ ազգը մը և այնպիսի
 անասան յամառութիւն մը,
 զորս Եւրոպան պէտք չէ որ ան-
 տեսէ:

Արեան ծովեր չի կրցան իր
 հայրենասիրական զգացումները
 խեղդել. այսօր, ձեռք կը պա-
 հանջէ որ ձեռք առնէ իր սուրբ
 գաղտը և անմիջական ու ազգու-
 միջոցներով, իրադարձեք ինչ որ
 այնքան երկար առեւն է ի վեր
 Մարտիրոսացած երկիրը ձեռք կը
 սպասէ:

Մենք ուզեցինք կատարել
 պարտականութեանց ամենէն

նուիրականը ձեզի յիշեցնելով
 ինչ որ ձեռք կը պահանջէ ար-
 դարութիւնը, ձեր պատիւը եւ
 ձեր շահերու հոգն իսկ:

Իսկ մենք, այսպիսի կացու-
 թեան մը հանդէպ, պիտի շա-
 րունակենք մեր գործը այն բո-
 լոր խանդով զոր պիտի ներշնչեն
 մեզ յուսահատ ազգի մը վճառ-
 կան գործողութիւնը և յիշատա-
 կը այն արեան զոր մեր եղբայր-
 ները վոթեցին իրենց ամենէն
 աղնիւ ու ամենէն նուիրական
 գաղտին համար:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Բարիկ, 17 Փետր.

Փետրվար 12ի շարաթ իրիկուն,
 մեծ շքեղութեամբ «Էնթիլթիլ»
 ճարտար հոյակապ սալոններուն
 մէջ տեղի ունեցաւ Հայ Ուսանող-
 զական Ակումբին երեկոյթ-պա-
 րահանգէսը:

Նուագահանգէսի սրահը լեց-
 ուած էր արդէն ֆրանսացի,
 անգլիացի, ռուս և հայ խումբ
 բաղմութիւնով մը՝ հանդէսին
 բացումէն մէկ ժամ առաջ:

Օրիորդ Պապայեան, ռուսահայ
 անուանի երգչուհին, մեծ յաջո-
 զութիւն գտաւ. իր ձայնին ե-
 լեւէջները ամէնքը յուզեցին:
 Պ. Սէկի, Մեծ Օրբայի ան-
 ուանի թէնօրներէն մին, իր
 առնական ձայնով սրահը կը թը-
 դացնէր և երկոյս բեմ կը կան-
 չուէր, բուռն ծափահարութեանց
 մէջէն: Տիկին ժէօրժ Մարթի իր
 յայտնի «քօմբօզիթէօն» ամուս-
 նոյն դաշնակի վրայ ընկերակ-
 ցութեամբ, երեկոյթին մեծ փայլ
 տուաւ: Օրիորդ Պիւլար, ան-
 ուանի երգիծարանուհին, նմա-
 նապէս շատ յաջողութիւն գտաւ.
 իր նուրբ ու քաղցր արտասանու-
 թիւնը այնքան կը հմայէր ուն-
 կընդիրը որ, զեղանի օրիորդին
 մէջ ճշմարիտ հրեշտակի մը ձայ-
 նը կը գտնէր:

Պ. Վայթ, խափշիկ դաշնակա-
 հարը՝ ճշմարիտ վարպետ մը՝
 ջութակին լարերուն վրայ սու-
 լիչի ճշմարիտ երաժշտութիւն մը
 կը լսեցնէր: Արիշ բաղմութիւ
 նշանաւոր արթիւտներ բեմին

վրայ երեւցան, որոնց մէջ մասնաւոր յիշատակութեան արժանի է Պ. Սվաճեան հայ անուանի գաշնակահարը:

Քոնստանդնուպոլսոյ յայտնի բրոֆէսոր Պ. Վարնայոս շափ կուտար իր աշակերտութիւններէ և հայ ուսանողներէ բաղկացած խառն երգեցիկ խումբին, որ մեծ յաջողութեամբ երգեց երկնայն «Նո լսեցի մի անուշ ձայն, և Հերիք որգեակք» երգերը. ֆրանսացիներու վրայ այս երգերու տպաւորութիւնը այնքան մեծ եղաւ որ որոտընդոտ ծափահարութիւններով վերստին անոնց կրկնութիւնը խնդրեցին: Պ. Ն. Վրիպարեան «Հերիք որգեակք» երգին «սուր» մասը երգեց, խիստ կորովի շեշտով մը:

Նուագահանդէսին այս մասը իր տեսակին մէջ, կրնամ ըսել որ, առաջին անգամ ըլլալով կը խորհրդացարդ եւրոպայի հայերուն կազմակերպած երեկոյթներուն մէջ: Հայ Առանողաց Ակումբը ասով կուզէր ցուցնել թէ ինքը իր երեկոյթով կրկին նպատակներ ուզած էր իրագործել. նախ երեկոյթին հասոյթով աղքատ ուսանողներուն նպաստել, երկրորդ հայկական երաժշտութեան ճաշակը տալ եւրոպացիներուն, որոնք խիստ գէշ գաղափար մը ունին արեւելեան երաժշտութեան վրայ:

Պարահանդէսը սկսաւ կէս գիշերը քառորդ անցած «Լէզիկինկա» բտուած վրայիական պարով. հոս ալ յաջողութիւնը մեծ էր և Ֆրանսացիք հետաքրքրութեամբ կը գիտէին արեւելեան այս պարը: Ամբողջ սրահները լեցուած էին ընտրեալ բաղմունքներով մը, թերթերու թղթակիցներ, Բարիլի շինուորական և այլ կըրթական և բարեգործական հաստատութիւններու ներկայացուցիչներ, իրենց ներկայութեամբ կը պատուէին և կը գովէին հայ Առանողաց Ակումբի անդամներն ու վարչութիւնը, որ իր գործուն

եռանդով ու սգով կարողացած էր հանդիսականները զոհացնել: Բաղդատարար ներկայ հայերը ցանցաւ թիւ մը կը կազմէին, ու այդ ալ այն պատճառով որ անոնք սովոր են նկատել ուսանողական ձեռնարկները իբր անյաշող և բարոյապէս ինկամ գործեր: Եւ երբ երեկոյթին յաջողութիւնը լսեցին, շատեր զլջացին այդքան բարեյաշող զուարճութեան մը առիթը փախցնելուն համար: (*)

Պարահանդէսը տեւեց մինչև ժամը առաւօտեան 6ը, և ամբողջ բաղմունքները զոհուանկութեամբ մեկնեցաւ սրահէն: Հայ Առանողաց Ակումբը իր բոլոր ծախքերը գոցելէ վերջ, նշանակելի շահ մըն ալ ունեցած է, ինչ որ իրեն յաջողութեան մէկ ապացոյցն է: Վ.Ա.ՂԱՒԻՆ

Գիտական, 18 փետրվ.

Ամսոյ 15 ին երեկոյեան, քաղաքիս Մանկակալ փողոցին քիւրտերուն սրճարանին մէջ զարհուրելի դէպք մը պատահեցաւ:

Գիշերը արդէն բաւական յառաջացած էր, փողոցի անցուղարձը ընդհատուած էր, ամէն մարդ սրճարանները քաշուած էին: Յանկարծ ատրճանակի պայթիւն մը լսուեցաւ, քիւրտերուն սրճարանէն սկսան յաճախորդները դուրս թափել զիրար կոխկըռտելով: Աստիկանները կը շրջապատեն խանութը, որուն մէջ տեղ գիտի մը տարածուած էր, ու խանութին պարտիկ սպասուորը քարացած մնացած էր հոն վախէն: Սպասուորը իմացուց թէ սպանուողը հայ մըն էր: Քանի մը հայ

(*) Հոս յօդուածագիրը զանազան յարձակումներ կրնէ Առանողական Միութեան և Անահիտի խմբագրին վրայ, որոնք չլստատած են խանութի հանդէսին յաջողութիւնը: Մենք Ակումբի ու Միութեան խնդիրը վաղուց փակած ըլլալով, յօդուածին այդ մասը ամբողջովին զանց կընենք:

երիտասարդներ դիակին մօտեցան, հարցուցին թէ ո՞վ էր զինքը սպանողը: Վերաւորեալը հազիւ կրցաւ պատասխանել թէ սրճարանակալը պարպած էր իր վրայ վեցհարուածները: Զարնուողը հիւանդանոց փոխադրուեցաւ ուր մէկ երկու օր ետք մեռաւ:

Իսկ ոճրագործը տաճկական հիւպատոսարանը կապատանի ուր կը պատմէ կեանքը մը սպաննած ըլլալը: Հիւպատոսը քաջալերական խօսքեր կուզէ ոճրագործին, և անմիջապէս կառավարութեան մօտ կը դիմէ յայտնելով որ ոճրագործը իր մօտն ապաստանած է: Կառավարութիւնը բանա տարաւ զայն ուր կը լսենք թէ չղթալակապ է:

Թուրքերը հանդանակութեան սկսած են, ժամ տուալ փառատան մը բռնելով ամբողջապէս կը զրկուին իր պաշտպանելու համար: Մեր հայերը անտարբեր կը մնան տակաւին:

Ռուման կառավարութիւնը սկսած է անհաշտ աչքով նայել քիւրտերուն և թուրքերուն: Ամէն օր խուզարկութիւններ կը կատարուին թուրք սրճարաններու մէջ: Անցեալ օր, ցերեկ տուն թուրք տտալձագործի մը խոնու թը խուզարկեցին շատ մը փամփուռներ և վեցհարուածներով, մարթիին հրացաններ, սուրեր ևն. զտան: Խանութին տէրը ձերբակալուեցաւ և բանտ տարուեցաւ: Կառավարութիւնը խիստ հոգիով թեան տակ առած է «տճիկները»:

Ղ. Պ.

Ա.Ռ.Ա.ՂԱՒԻՆ ԵՒ ՎԵՐՁԻՆ

ՊԱՏԱՍԽԱՆ

Իմ «Ամենափութակար հայ տարրոյ յօդուածը վառնայի լրագրութեան նիւթ է դարձել: Գեւ շատ վաղուց է որ այդ լրագրիւնները խեղաթիւրուած են իմ ամեն մի բառը, իրանց տրամադրութիւններին յարմար բացատրութիւններով են:

Սյոզ կղզու գաղթականութեան հիմը զրուած է ասկէ մօտ 60 տարի առաջ: Երկիրը վերին աստիճանի բարեբեր ու հարուստ է: Սյոզ հարստութեան մասին գաղափար մը տալու համար ըսենք միայն այն, որ 1897 թ. ին հոն ներմուծուած ապրանքներուն արժէքը 201,000,000 ֆրանքի կը հասնէր, իսկ արտածուած ապրանքները 250,000,000 ֆրանք կը զնահատուէր: Գաղութին տարեկան պիւտճէն 4էն մինչև 5,000,000 լիւր սթէրլինի կը հասնի (100—125,000,000 ֆրանք):

Ինչ մը չեղինք նիւթէն: Անգլիական վարչութեան ամենաէական սկզբունքն է ապակեղրուեցումը: Սյոզ սկզբունքը կը գործադրուի ոչ միայն Մայր-Հայրենիքի, այլ և բոլոր գաղութներու մէջ: Ուր քանի մը անգլիացիներ միա-

նէր տալիս, տակաւն միշտ ակնարկներով, ասանց անունս զործածելու: Ի հարկէ այդ աստակ ակնարկութիւններին պատասխանել չարժէր. իսկ այսօր արդէն չ. խմբագրիւնները անունս էլ ստան. գուցէ ինձ սարսափեցնելու մտքով: Երազ:

Ամենից բարբառող արտասուքով Պ. խմբագրիւն է. Յ. Վ. որը լի գործածած խիստ ամականները միայն ամբողջ յօդուածից վերջնելով ինչ որ արտասոց, իր ուղեղին յարմար, մի եղբակացութեան է եկել:

Եկ ու մի ծիծաղիր. ելիս իմ և ի կը ծիծաղիր, ճշմարիտ, երբ իմանայ թէ կան խմբագրիւններ, որոնք իմ յօդուածից եղբակացութեան են թէ Պոլսում յեղափոխութիւն են արել միայն պոլսեցիներին պատժելու համար:

Բայց այդ տարօրինակ եղբակացութիւնը յայտարարելուց, Պ. Յ. Վ. չը գիտեմ թէ ինչու. Հայ. Յ. Գաշ. հրաւիրուած է ջրել այն ինչ որ պարտի խեղքի արդիւնքն է, որը, եթէ նոյն իսկ իմ լինէր, Գաշնակցութեան համար ոչ մի նշանակութիւն չունէր: Որովհետեւ այդ մարմինը երբեք պատասխանատու չէ իր մի անգամի յայտնած որ եւ է անհատական կարծիքի համար:

Երկ շեղուակ թերթի Պ. խմբագրիւն և նրա արժանաւոր բնկերներին յայտարարում ենք, որ մենք խիստ ամականները գործ ենք անում միշտ յարմար սեղան ու ամեն բանին սայիս ենք իր լսակամ անունը, ինչպէս ազնիւիւն ազնիւ ենք անուանում, վախճան վիս:

Եթէ Պ. խմբագրիւն ուզում է մեզ գէթ զրգոյ պոլսեցիներին, այդ որիչ հարց, մեր փոյթը չէ. մենք կը շարունակենք լաւ պոլսեցիներին յարգել, իսկ վատերին հարուածել, ինչպէս եւ ամեն վատ հայի:

Ահա մեր առաջին և վերջին պատասխանը թէ Իրաւունքի խմբագրիւն և թէ նրա արժանաւոր բնկերներին, այսուհետեւ ինչքան կուզեն թող մեր գրուածները խեղաթիւրեն: Մենք ժամանակ չունենք զրանցով զրազվելու:

ՎԱՐԴՈ

—)(—

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԳՆԱԿԱՆ ԳԱՂՈՒԹ ՄԸ

Գերմանացիները գաղթականներ ունին, գաղթականներ չունին. ֆրանսացիները գաղթատուներ չաւ ունին, գաղթականներ չունին. իսկ անգլիացիները թէ՛ ան ունին, թէ՛ միւսը:

Այսպիսի հինգ մայր ցամաքներու մէջ ալ հոս ու հոն սփռուած են բազմաթիւ անգլիական գաղութներ: Հոս կղզի մը, հոն կղզիաց խումբ մը, երրորդ տեղը մայր ցամաքի ամուրկէկ կամ բարեբեր ու իւզոտ կտոր մը, չորրորդ տեղը ամբողջ մայր ցամաք մը, և և այլն. . . ամէնն ալ անգլիական ազան ձեռքերուն մէջ սեղմուած կը մնան: Հոս Հնդկաստանն ու Եգիպտոսն են իր ազան որկորին և ճարպիկ շահագործութեան ստար-

կաները, հոն ձիւրալղարին ժայռերուն ծերպերը կամ Մալայի փոքրիկ կղզեակը: Ասկէ միւլարդներ կը հանէ, իսկ հոն արծիւի բուններ կը շինէ, ստորջրեայ ականներ ու դարաններ կը սարքէ, թնդանոթներու երամակներ կը սրուպուզցնէ, որ «հաւքը թեւով, օճը փորով» անկէ անցնել չհամարձակի ստանց իր հրամանին:

Անգլիական այդ բազմաթիւ գաղթականութիւններէն մէկն է նաեւ Նոր-Ջելանտա կղզին, որուն ամփիւ կուզելի քանի մը խօսք ըսել Եւրոպայի ու շաղիւր ընթերցողներուն:

Նոր-Ջելանտա Աւստրալայի ամենամեծ կղզին է: Անոր մեծութիւնը կը հաւասարի Միացեալ-Քաղաքներու (Անգլիոյ, Իրլանտիոյ և Իտալանտիոյ) մեծութեան: Բնակիչներու թիւը 743,000 է, որոնցմէ 40 հազարը տեղացի կիսավայրենի մար-

ցան եւ գաղութ մը կազմեցին, իսկ այն ինքզինքնին կը գիտեն իբր սեղանական ջոկ մարմին մը. անկախ իրենց ամէն ճեղքին զործերուն շրջանակին մէջ, սերտ յարաբերական կապով մը կապուած Մայր-Հայրենիքին հետ: Ամէն գաղութ ունի իր բնարուած մարմինը, որ չափուած ու ձեւուած է անգլիական Բարլամենտին կազմին վրայ: Սյոզ մարմինն իր «օրկաններով» (նախարարներ եւն.) կը վարէ իր շրջանին վերաբերեալ ամէն գործերը, ասանց Լոնտոն գիւտելու:

Ասոր հակառակ սկզբունքը կը գործադրուի Ֆրանսայի, Ռուսիայի և այլ պետութիւններու մէջ: Հոս կը թաղաւորէ խիստ կեղտոնացումը: Հեռուոր և մօտաւոր գաւառներն ու գաղութներն ամէն կարգադրութիւն կը սպասեն ի վերուստ. Բարիկէն ու Երկրապաշտութիւն:

Տեղը մեզի չի ներիւր կանգ առնել քիչ մը մանրամասնօրէն այս երկու

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

Տարբերիկի այդ սարսափելի ձորին մուտքն ու գերբը իր բընական երեւոյթով նկարագրութեան արժանի է։ Այս ձորին սկսած անկը, կոփ գիւղի մտա, սեղմ ու ահաբեկի կիրճ մը ձեւացնելով, գէպի ներս հեռագնացելով, գէպի կը տափահանայ ու փոքր ինչ կը լայնանայ «ներքին Գաշա» անունով, փոքրիկ սիրուն գաշա մը ձեւացնելով։ Ահա այս ձորին ամենաբարձր տեղանքը վլճակում է Տարբերիկ գաւառակին ու իր գիւղերուն, որուն վերին բաժինը, լեռնային անանցանելի կիրճով մը, Մշու գաշաէն գէպի Սասուն տանող ճանապարհին հետ կը հաղորդակցի։ Իննականհինգ լեռներու մէջ շարքը կուգայ կը հասնի մինչեւ հոս։ Այս նեղ լեռնանցքին վրայ շինուած էր «Սասանի Մաղ» անունով փայտեայ կամուրջը, որուն ներքեւի ձորը ահարկու անդունդ մը կը ներկայէր։ Արտաքին սեւէ յարձակման մը առեւ, Սասունցիք այդ կամուրջը կը քակէին։ Այս իրենց անմատչելի սարերուն ու քարերուն մէջ ամրանալով, կը պաշտպանէին անվահեր իրենց ինքնուրուի թիւեր։ Ահա այս եզակի գերբով օժտուած անառիկ «Տարբերիկ» կրակ ու բոց քաղաքը, սարինքէ ի վեր իրենց ահագնագործ հրացաններով, լայն վահանով ու ներքուսուրբով պատու թեան Ս. դրոշմ բարձր բռնած, իրենց բիրտուոր նահատակայ արիւնով սրբագործուած, մեծ մարդասպանին, հրէշային գաղափարին գործադրութիւնն յոռաջ թերու, ու ազատ «Տարբերիկ» իր երջանիկ գիւղերով այնքան գիւցազնական մարտուիչն ու հերոսային գիմադրութեանէն ետք, նենգաւոր թուրքին լիրբ վայրագութեան զոհ գարծառ։

1882 ի ամրան մէջն էր, երբ մենք առիթ ունեցանք Ս. Աղ-

բերիկայ վանքը տեսնելու տենչով, այցելել նաեւ այդ երկու (Շաստաղ ու Տարբերիկ) գաւառակները, ու կարելի եղածին չափ հետաքրքրութեամբ ծանօթութիւն քաղել այդ քաղ ժողովրդեան ու իր հայրենիքի մասին։ Այն օրէն ի վեր թէեւ 16 տարիներ անցած են, ու հետզհետէ բարգոտող գէպերը, թէ՛ այդ ցանկալի լեռնոտաշխարհն ու թէ՛ նորա անվահեր ժողովրդեան կեանքը տարբերակ անակնկալներու ու գառն յուսախաբութեանց ենթարկած, սակայն հիմակուան պէս լուրջ կը յիշեմ այն բոլոր խոնկափառութիւնն ու աներկիւզ պատրաստականութիւնը զոր այդ ինքնապաշտպան ժողովուրդը ցոյց կուտար գէպի մարտ, գէպի անհամեմատ կուր։ Սասունցիին սիրական ու հաւատարիմ ընկերէր իր «գեղին պրօպոլի շաշխանէն» ու արիւն կաթող խնշալը։ Անոր կերպարանքը կը ներկայացնէր հին Սասունցիի այն ըմբոստ տրպարը, զոր պատմութիւնը կը ներկայացնէ իբր Ասորեստանէն հատուածուած։

ՆԱՀԱՊԵՏ

(Շարժեցանկի)

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Մեր Աւսթրիական թափառողներուն կը ծանուցանենք թէ այդ քաղաքին համար «նարմուռ» գործակալութիւնը յանձն առնել բարեհաճած է Տ. Մանուկ Պ. Գալուստեան։

—Յ. Ա. Գ. Մանուկիւն.— Ձեր զրկած մանտարութիւնը չենք ստացած. խնդրած թիւերնիւ մտաւորապէս կը զրկենք։ Մեր փրձուած աղան արդէն գտած ենք։

—Սլիվէն Տօքթ.— Օրմանեան կուղէ 16—18 տարեկան սպասուհի մը, երկու պղտիկ աղջիկներ խնամելու համար։

—)(—

ՏԵՂԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ՎԱՐԳԱՆԱՅ ՀԱՆԴԵՍԻՍ

Այս տարի վասնան խիստ շքեղ կերպով տօնեց Վարդանայ յիշատակը։ Հինգշաբթի առաւօտ, սրտատարակն աւարտուին հաղթ, հանդիսը սկսու։ Եկեղեցին լիք լեցուն էր ամէն կարգի ու սեռէ խուսն բազմութիւնով, այնպէս որ շատեր գուրբ մնալ պարտաւորուած էին։ Ազգավարժարաններու աշակերտները գասը գրաւած էին։

Հանդէսը սկսու Տարբերիկ քայլերգով, ուրկէ ետք ատենախօսեց վարժարանին ուսուցիչներէն Տ. Վահան Մանուկեան, նախ օր ներառելով վարդանայ պատմութիւնը։ Տ. Սասնախօսը Մամիկոնեանց ցեղին պատմութիւնը ընկելով, շեշտեց զխառնարար տնտես կատարած գործին մեծութիւնն ու կարեւորութիւնը։ Յետոյ իր զգուսնքն յայտնեց այն թեւեւ անհայտ զրոյսը, իբր թէ դարուս քննադատական ոգւոյն հետեւելով եւ մէկ քանի Եւրոպացի կամ Հայ մատենագիրներու գաղափարները փոխ առնելով, կը ջանան վարդանի գործը, իբր անձնական փաստարկութեան ու անխիղճ յանդգնութեան մը արդիւնք նկատել։ Տ. Մանուկեան Մամիկոնեան տան ներդրող ընկելով, մի առ մի յիշատակեց այն բոլոր ցեղական առաքինութիւնները, անհամար թիւեր, համեստութեան, անխառն գիւցազնութեան ու վին՝ որով նախարարական այդ սուներ, միակը մեր պատմական հին նախարարութեանց մէջ, ոկիւղէն ի վեր նշանաւոր եղած էր միշտ իր վասակներով, Մուշեղներով, Վահաններով, Վարդանով, Վաչէներով ու Մանուկներով։

Յետոյ հետզհետէ վարժարանին աշակերտներն ու աշակերտուհիները, փոփոխակի արտասանութիւններ ըրին, երգերով ընդմիջուած։ Ամենքն ալ յաջող էին եւ գոհ ձգեցին ներկաները։ Մասնաւորապէս պէտք է յիշատակել Արշալոյս անուն օրիորդին արտասանութիւնը, ուր փոքրիկ օրիորդ այնքան բնական, այնքան ճշգրիտ ձեւերով ու ձայնի ելուէջներով կարողացաւ արտայայտել իմաստները, որ սքանչացուց բոլոր ներկայները։

Հանդէսը վերջացաւ վարժարաններու անօրէն Տ. Վահան Շահրիմանի ատենախօսութեամբ։ Տ. Շահրիման

ընդհանուր տեսութիւն մը ըրաւ Վարդանայ ժամանակին վրայ, ցցուց թէ ո՞ւր կը կայանար անոնց գործին մեծութիւնը, զայն նկատեց իբր ժողովրդական ձգտումներու մարմնացումը, եւ անցնելով ներկային, ըստ թէ Հայ ազգը վարդանայ յիշատակը այն ատեն միայն ճշմարտապէս յարգած կըլլայ, երբ հետեւի անոնց ճամբուն։

Շարժում իր յաջորդ թուով պիտի հրատարակէ նոյնութեամբ Տ. Շահրիմանի ատենախօսութիւնը որուն թոյլատուութիւնը արդէն առած է։

ՔՐՈՆԻԿ

Ամենահատուած աղբիւրներէ կիմանանք որ Աղբ. քանդակի վերակազմեալ Հնչակեան և Գաշա-նակցական կոմիտէի թիւերը համաձայնած են իրարու հետ բարենպատակ ձեռնարկի մը համար միասին աշխատելու։

Այս լուրը ուրախութեամբ ծանուցանելով, կը յուսանք թէ մեր բոլոր յեղափոխական կոմիտէաները Աղբ. քանդակի տուած օրինակին հետեւելով, պիտի համաձայնին իրարու հետ գործակցելու երբ առիթը գայ, և առով լեռնեան բոլոր այն բարանները որոնք յեղափոխութեան հայհոյելը իրենց բան գործ ըրած են։

—Երէկ իրիկուն Անկէլ Սլավօֆի որահին մէջ ի նպաստ Վասնայի աղային վարժարանայ թատերական ներկայացում մը տրուեցաւ, քաղաքին հայ երիտասարդներէն կազմուած խումբի մը առաջնորդութեամբ։ Ներկայացումն անկէն էր Գայլ Վահանը։ Ներկայացումը բաւական շքեղ կերպով պատրաստուած էր։ Սրահը խուսն բազմութեամբ լեցուած էր։ Տոմսակները ամբողջութեամբ ծախուած էին գրէթէ. կը կարծուի որ բաւական կուրեւոր հատոյթ մը ունեցած է վարժարանը։

—Թատերական ուրիշ ներկայացում մը ալ անցեալ հինգ-

տեսակ վարչական սկզբունքներու օգտակար կամ վնասակար կողմերուն վրան։ Այսքանը միայն ըսենք, որ Անգլիոյ գաղթականութիւններու մէջ յաջողակ ըլլալու ամենախոշոր գաղտնիքներէն մին կը դիտուի անոր լայն սպակեղորոնացումը։

Ֆրանսացիք և Անգլիացիք համարեա միաժամանակ են հաստատուեր մէկը Հնդկաստանի, միւսը Հնդկաստան մէջ, բայց այսօր Անգլիա որոշ հիմեր է գրած Հնդկաստանի մէջ, հոն սիրուեր, հոն ժայռի մը պէս հաստատուեր է իսկ Ֆրանսա Հնդկաստան մէջ զեռ ևս աւազի վրայ նստած տան մը կը նմանի։

Այդ սկզբունքներու տարբերութիւնն է (միացած քանի մը ուրիշ պատճառներու հետ), որ սարկա 100 տարի է Ռուսիա կառավարող մէջ հաստատուեր է, բայց մինչեւ օրս մէկ անձ մը, մէկ անխաշառ անձ մը չէ գտեր իրեն համակրող, չնայելով, որ կողմաւ իր քթին սակն է և

այնքան ալ միլիոններով սեփական գաղթականներ ունի հոն... Այն ինչ Անգլիա 83 թիւէն ի վեր է միայն եղիպտոսին մէջ, լոկ 5—6,000 գրաւման բանակով (armée d'occupation), շատ քիչ զուտ անգլիացի գաղթականներով բայց երկրի ազգաբնակչութեան մեծամասնութիւնը, մասնաւոր ինքն մեծամասնութիւնն իր նա կապեր է չաճու և համակրանայ հաստատուն կողով մը։

Նոր-Ջուրջանիա ալ ունի իր անգլիական ինքնավար կառավարութիւնը, այն ալ խիստ լայն հիմքերով։ Անգլիոյ թագուհին ունի անուանաւոր Banfurld կոմսը)։ Այս վստաւքայի իշխանութիւնը այնքան անուանական է, որքան և թագուհու Մայր-Երկրի մէջ։ Կղզին ունի իր երկու բարրամէնները, երկուքն ալ ընտ-

րուած երկրի բոլոր չափահաս քաղաքացիներու կողմէն։ Ընտրութիւններու կը մասնակցին ևս տեղացի Մասրիները և կանանց սեղը։

Իսկապէս նոր-Ջուրջանիոյ գաղթականութիւնը միակ անկիւնն է աշխարհին մէջ, ուր կիւնն կապու ընտրողական իրաւունքներ կը վայելէ թէ տեղական, թէ քաղաքական ամէն գործերու մէջ։

Անգլիոյ մէջ կինը ընտրողական իրաւունքը կը սահմանափակուի միայն տեղական ժողովներու խնդիրներով, իսկ ազատաւոր եանքիներու Միացեալ-Նահանգներու մէջ քանի մը նահանգներ (օրինակ՝ Քանզաս) կիւններուն իրաւունք են սուեր մասնակցելու միմիայն թաղական և քաղաքներու ինքնավարական գործերու մէջ և ոչ նահանգին վարչական պատգամաւորական ժողովներուն ընտրութիւններու մէջ։

Եւրոպայի մայր ցամաքի ամենատաղաքէմ ու լուսաւոր երկիրը,

Չուիցերլանդ կիւններու խնդրին մէջ յուսահատեցնելու չափ պահպանողական ու նոյն իսկ յետադէմ է։ Ասոր համեմատ ևս Ֆրանսա, Կերմանիա, Աւստրիա և այլն։

Կղզին կը կտուտարէ թագուհու ներկայացուցչի նշանակած պատգամաւոր նախարարութիւնը երկու ժողովներու համաձայնութեամբ, հեշտ այնպէս, ինչպէս Անգլիոյ մէջ։

Այս անգամ այս քանի մը տեղեկութիւններով բաւականանանք, իսկ հետեւեալ անգամ քիչ մը կանգ կտանենք նոր «ընկերագիրական» խիստ առաջադէմ փորձի մը վրայ, որ այդ լուսաւոր կղզին քուէարկութիւնով վճռեց ընել 1898 թիւէն սկսեալ։

ԲԱԲԱ

—)(—

շարժի գիշեր տրուեր է, որուն համար կրտսն թէ չա՛ն առջաջող եղած է :

—Պոլսէն տրուած մասնաւոր տեղեկութեանց նայելով Օրթոքսի գերեզմանատան խնդիրը Օրթոքսի Պատրիարքի ակնկալած հետեւանքը չէ ունեցած :

Փետր. 19ի ուրբաթ օրուան խառն ժողովոյ մէջ, կրօնական ժողովի անդամները պնդած են որ պէտք է գիտել Ս. Պատրիարքին և անոր հաւանութեան ենթարկել խնդիրը իր բոլոր պարագաներով :

Այս առաջարկութիւնը առջնացուցած է Պատրիարքը և քաղաքական ժողովին անդամները որոնք վայրկեան մը խոյ չէին կրնար խորհիլ այսպիսի բան մը : հետեւաբար կրօնականաց ընդգրկութեան և այս առաջարկութեան վրայ (որուն անցեալն ալ կայ արգէն Յարութիւն Պատրիարքին օրով, Պէշիկիմաշի դերեզմանատունը պահանջուելուն առթիւ) պարտաւորեր են յայտարարել թէ առ այժմ յետաձգուի այս խնդիրը :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

Մ Ա Կ Ե Դ Ո Ւ Ս Ա

Բ. Դուռը Սերունդիկի և Մանասզըրի կուսակալներուն հրաման զրկած է Մակեդոնիոյ քրիստոնեաները հրաւիրել որ պատգամաւորութիւն մը զրկեն իրենց արտունջքները և անոնց պատճառները Օսմ. կառավարութեան յայտնելու համար : Մանասզըրի քրիստոնեաները ամենէն առաջ պատասխանած են այս հրաւիրին : Երկրին քրիստոնեայ երեւելիներէն մէկ քանիները կուսակալին ներկայացրեց և անկէ ինչո՞րք են ժողովուրդին մէջ քանի խնդիրքները Սուլթանին մատուցանել : Կուսակալը յանձն առեւ է իմացնել անոնցմէ երեքը : Բ. Դուռն ինչո՞րք մէկ քանի չափազանց ծանր տուրքերու թեթեւացումը, քրիստոնեաներուն դպրոցներ հաստատելու արտօնութիւնը, ամէն յեղափոխական շարժումներու տարածման ստատիկ արգելումը :

Բւ սակայն նահանգին կուսակալը բացարձակապէս մերժած է ուրիշ ունէ խնդիրք մտիկ ընելու Բ. Դրան հաղորդել, որոնք ամենէն էական ու անհրաժեշտներն էին : Մանասզըրի քրիստոնեաներուն պատգամաւորները կը գանդատէին նաեւ կեանքի, ինչքի ու պատուի անպահովութեան և զինուորական իշխանութեանց անվայել ընթացքին դէմ, որոնցմէ քրիստոնեայ ժողովուրդը մեծապէս կը տանջուի :

—Մակեդոնական յեղ. կեդր. կոմիթէն օտար աէրութեանց նախարարներուն և անոնց Սօփիայի ներկայացուցիչներուն յիշա-

տակազիր մը ուղած է գրկել, Մակեդոնիոյ ինքնավարութեան մասին պէտք եղած բարենորոգումները Սուլթանէն պահանջելու համար : Բայց օտար կառավարութիւնները, ինչպէս Ռուսիա, Աւստրիա, Ենգլիա և ուրիշներ մերժած են յիշատակազիրն ընդունիլ :

Ի Ո Ւ Բ Ի Ս Ա

Սուլթանը անդլիական դեսպանին ունկընդրութիւն մը շնորհելով, յայտարարել է թէ Օսմ. կառավարութիւնը մեծ կարեւորութիւն կուտայ Ենգլիոյ և Թուրքիոյ մէջ տարիներէ ի վեր պահպանուած աւանդական բարեկամութեան, որ պէտք է միշտ գոյութիւն ունենայ երկու պիտութեանց մէջ : Սուլթանը տեղացւոր է նաեւ թէ, ինք մահմեդականներուն խորհուրդ տուած է օրինապահ ըլլալ ու յարկել միշտ անդլիական կառավարութիւնը :

—Ճիտաէի մահմեդական ընակչութիւնը զայրացել է այն առողջապահական միջոցներուն դէմ, զորս տաճիկ կառավարութիւնը ձեռք առած էր ժանտախտին տարածումը արգելելու համար : Թէեւ արգելած էին բնակիչներուն քաղաքէն դուրս ելլել, անոնք յարձակեցան Մէտինէ տանող քաղաքային դուռն վրայ զոր ամբողջովին կործանեցին և քարտնջիւնայի վրանները աւերեցին :

Բաղմաթի ուխտաւորներ թաւանուած, խանութները փակուած են : Տեղական իշխանութիւնները բոլորովին թոյլ, անկարող են հոտոնքին առաջքն առնել : Օտար հիւպատոսներու տեղեկութեանց համաձայն, ուխտաւորներուն մէկ մասը թալանին մահակցած է : Տեղական առողջապահական ժողովը կը խորհի ձեռք առնուելիք անհրաժեշտ միջոցներու վրայ : Սուլթանը հրամայած է կարգապահութիւնը վերահաստատել և ամէն կերպով ապահովել առողջապահական միջոցներուն գործադրութիւնը, բայց քաղաքային և զինուորական իշխանութեանց թուլութեան պատճառաւ ցարդ ոչ մէկ կարգադրութիւն եղած է :

—Անցեալ օր Սուլթանին ետվէրներէն մէկը փաշա մը սպաններ է : Երկ օրը Բերայի մէջ սպաններ են Սայիա փաշայի սըղան : Սպաննողը ստիկան մըն է եղեր, որ գեռ չէ ձերբակալուած :

ԹՈՒՂՈՒՆԻ ԱՂԵՏԸ

Թուրքի ծովային վառօդարանին մէջ պայթում մը տեղի ուցր է : Պաշտօնի վրայ գտնուող բոլոր զինուորները ու լազմաթիւ բանուորներ, շրջակայ գիւղերու բնակիչներ սպաննուել են :

Մինչեւ Հիւն 70 գիակ գանաւած է, և կը կարծուի թէ աւերակներուն տակ դեռ բաւական զիակներ կը գտնուին, վերաւորումներուն թիւը 110ի կը հասնի : Պայթումին պատճառները գեռ յայտնի չեն, կը կարծուի որ անծուխ վառօդի սնուկներուն մէջ քիմիական անբարապարտութիւն մը յատուցելու է, որ պատճառ եղած է վառօդարանին մէջ գտնուած 50,000 քիլո գրամ օդին պայթման :

Երկու քիլոմէթր տարածութեամբ ամէն ինչ քանդուած է, տուները վրած, ծառերը տապալած, դաշուներ ամբողջովին տւերած ու քարերով ծածկուած են : Երկու քիլոմէթր արեւմտեայ 500 ֆր. զրկած է իր անուշիկ նպաստ : Կառավարութիւնը ու քաղաքական խորհուրդը նրա պատիւ հանդանակութիւն բացած են : Այսպիսով անհրաժեշտ է որ պետութեան ծախսով պիտի կատարուի :

Ի Ա Ո Ւ Ի Ս Ա

Իշխան Ֆերիտիան, հինգ տարի է ի վեր առաջին անգամ ըլլալով ունկընդրութիւն շնորհել է Բէշիքօֆի, Սիմալուֆի ամենահաստատար մտերմին, որ իր բարեկամին սպանուելէն ետք այնքան կատաղի կերպով սկսաւ կռուիլ իշխանին անձին ու գործին դէմ : Բէշիքօֆի որ նոր դահլիճին յաւան է այժմ, կը կարծուի թէ յառաջիկայ ամսուն պիտի յաջողի նախարարութեան մէջ մտնել :

—Սօփիայի մէջ ձերբակալուեցաւ երեք սերպ ու մէկ պուլկար Դրամանները խումբ մը, երբ կեղծ պանթոթներ վաճառել կը փորձէին :

—Պեղկրատի ուսակալն զեսպանը, Բաքուքի Սերայիոյ ազատութեան ստրեղարձին առթիւ, եկեղեցի հրաւիրուած էր, բայց միւս գեսպաններուն պէս պալատ ճաշի չէր կանչուած : Ասոր համար ուս գեսպանը Սերայ կառավարութեան յայտարարած է որ, իր քաղաքապետ Մանսուրօֆին կը յանձնէ դեսպանատան գործերու ղեկավարութիւնը : Պալատին մտախիշրջանակներուն մէջ, կըսեն թէ, ժաքովքի ճաշի չի հրաւիրուելուն պատճառը անոր թշնամական յարաբերութիւններն էին գէպի պալատը, և այն հանգամանքները որով միայն հակառակ կուսակցութեան պատկանող անձերու հետ յարաբերութիւն կը պահպանէր :

—Ռուսիոյ լայսը ձեներալ Մանուկի յանձնարարել է զընտրութիւն մը կատարել փետ. 8ին Բեթերսպուրկի և ուրիշ քաղաքներու համալսարաններուն մէջ տեղի ունեցած ուսանողական անկարգութեանց պատճառներ :

րուն մասին, և անոնց արդիւնքը իրեն իմացնել : Համալսարաններու կարգ կանոնը վերահաստատելու գործը համալսարանական վարչներուն յանձնուած է :

—Ս. Բեթերսպուրկէն «Տէլլի Բրոնիքլի» քաջամ հետադիր մը կըսէ թէ Չարր Ռուսիոյ անուանական վեհապետն է միայն : Գործադիր իշխանութիւնը գրեթէ լայսարձակապէս Ս. Սիւրօֆի նախագահ, Բոպտոնօյէֆի ձեռքն է : Այս իշխանութիւնը Միքայիլ Մեծ գուբաին ձեռքը չէ, ինչպէս առհասարակ կը կարծեն արտասահմանի մէջ :

—Հոտոնյ պատը որ շարաթէ մը ի վեր ծանրապէս հիւանդ էր, սկսած է տակաւ ապարիւնել :

ՊՕՐՍԱ

Վառնա 27 Փետրուար

ՊԵՆՏԱՅ

Վազօն	լիպրա	55—58	հէթիօյ
		8.80—9.30	ֆրանք
Արապա	լիպրա	55—60	հէթիօյ
		9—11.20	ֆրանք

ԱՐԲԱ

Լիպրա	42—50	հէթիօյ	6.10—6.40
			ֆրանք

ՄԻՍԻՐ

Վազօն	55—57	լիպրա	6—6.05
Առապա	55—60	լիպրա	6—6.20
Կիւնկէ	15—20	վազօն	25—30
		առապա	կէլմէքալ տիր :

ՆԱՐԸ

Կիւնկէ	12	արապա	կէլմէքալ տիր :
	58—60	լիպրա	5.40—5.80
		Առապա	մուսուլմաի նարոթոն 21
		ֆրանք	հիւսպը իլէ տիր :

ՍԻԱՍԻ ԹՈՒՂԹ

Տիար Տիգրան Եռամանկան կը ծանուցանէ թէ ի ֆ. Պոլիս Գորչի խանի գիմաց, կը վաճառէ Աղբ. Հիւանդանոցի ամենէն բնախորհուրտ սեւ սիկարի թուղթէն, զիջալի գիւնրով մեծաքանակ և փոքրաքանակ : Բարեկործութիւնը և շտեր կը պահանջեն որ ամէն հայ գործածէ զայն : Կան նաեւ Պօն, Վոյթօ և ուրիշ ամէն սեւակ թուղթեր : Բանձնարարութիւնը կը կատարուի ճշտաւ և փութով :

ԻՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՆԱԲՈՒՄ»

Կը սպազուրին ամէն լեզուէ այցեւորմն, հասցեւորմն, նամակազուր, հարանիկան հրաւիրողի, մահապ, ինչպէս նաեւ պրօշիւռներ :

Գիւնկէն յոյժ գիւրամատչելի : Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին :

«Շ Ա Ր Ժ Ո Ւ Ս»

Վառնաի մէջ կը վաճառուի Մուսալա, Ապուրրահման մզկիթին դէմը հայկական գրատունը : Ա. Չարպահանկանի քով :

Отговорникъ : А. СУКЯСОВЪ

Печатница „Взаимность“ Вярна.